ՀՏԴ 891.981

ՄԵԾ ՀԱՅՐԵՆԱԿԱՆԸ ՀՈՎՀԱՆՆԵՍ ՄԵԼՔՈՆՅԱՆԻ ԵՐԿԵՐՈՒՄ

Մ.Թ.Հայրապետյան

գրականության և ժուռնալիստիկայի ամբիոնի ասպիրանտ

2005թ. մայիսին լրանում է Մեծ Հայրենական հաղթանակի 60-րդ տարին: 1939-1945թթ. տեղի ունեցած երկրորդ աշխարհամարտն իր էությամբ ցնցեց ողջ մարդկությանը՝ իր վրա բևեռելով բոլոր ժողովուրդների ուշադրությունը: Պատերազմի տարիներին գեղարվեստական գրականությունն ուրույն ձևով գինվորագրվեց պատերազմին: Մեծ հաղթանակից հետո պատերազմական թեման գտնվեց գրողների, այդ թվում և Հովհ.Մելքոնյանի ուշադրության կենտրոնում: Սույն հոդվածում քննարկման ենք ենթարկում Հովհ.Մելքոնյանի «Յոթնք արվարձան» վիպակը, «Որդուն սպասող մայրը», «Ձին» և «Նամակ» պատմվածքները:

Գեղարվեստական գրականության համար Հայրենական պատերազմի թեմատիկան երբեք սպառված չի կարելի համարել, ասվել են՝ մոռացված: Մեծ հայրենականը պատմության մեջ տեղի ունեցած այն ցնցումներից է, որոնք մշտական լարման մեջ են պահում մարդկային հիշողությունը: Ինչ վերաբերում է խնդրո առարկա թեմային, ապա այն կարելի է դասել գեղարվեստական գրականության մեջ «անվախճան» համարվող հիմնախնդիրների խմբում: Այս դեպքում նկատի ենք ունենում ոչ թե զուտ պատմական իրողությունը, այլ՝ երևույթի արծարծման և բացահայտման հրատապությունն ու անհրաժեշտությունը՝ պատերազմը դիտելով որպես համամարդկային աղետ, որը կարիք ունի մարդկային վերաբերմունքի գրականման:

Եռապատերազմյան շրջանում գեղարվեստական գրականության լայն շրջանառության մեջ մտած թեման արձագանք գտավ երկու պլանով՝ ռազմաճակատային և թիկունքային: Այս բնագավառում լուրջ ներդրում ունեցան Քր.Թափալյանը /«Պատերազմ»/, Հմ.Միրզոյանը /«Հայր և որդի»/, Հր.Քոչարը /«Մեծ տան զավակներ»/, Ս.Խանզադյանը /«Մեր գնդի մարդիկ»/, Բ.Հովսեփյանը /«Մերմնացանները չվերադարձան»/ Գ.Սևուգը /«Գերիներ»/, Մ.Սարգսյանը /«Լյանքը կրակի տակ»/ վեպերով ու վիպակներով:

Շարունակելով հայ գրականության լավագույն ավանդները և գիտակցելով թեմատիկայի կարևորությունը՝ Հովհ. Մելքոնյանը ստեղծեց փայլուն կտավի երկեր: Ճիշտ է, թեմատիկ առումով դրանք նորություն համարել չենք կարող, սակայն խնդրի մեկնաբանման ուրույն մոտեցմամբ և երևույթին ուղղված նոր հարցադրումներով, իր հայեցակարգով միանգամայն նորություն էին նրա երկերը: Ժամանակի առումով պատմական այդ իրողությանից կանգնած լինելով ավելի հեռու, քան իր նախորդները՝ Մելքոնյանը կարողացավ խորը վերլուծությամբ գնահատել պատմական անցյալը և հասնել աներևույթ եզրահանգումների:

Ժամանակին անվանի գրականագետ Ս. Արզումանյանը նշել է. «Մեզ մոտ ռազմաճակատային կյանքի պատկերները խիստ միագիծ էին: Պատերազմը մեծ մասամբ դիտվում էր իբրև հաստատված հաղթանակների շքեղթ կամ հանդես: Ժողովրդի գլխին կախված ահավոր օրհասը, ճակատագրական փորձությունը երկրորդական պլան էր մղվում: Հետևաբար՝ պատերազմը, իբրև ժողովուրդների ու մարդկության համար ծանր արհավիրք կամ խոր ոգեղրգություն, անտեսվում էր, իսկ դրա փոխարեն գլուխ էր բարձրացնում «հրավառության» սրամտադրությունը»{1}: Այս ամենը երևույթի բնական զարգացման արդյունք էր՝ պայմանավորված տարածաժամանակի բացակայության հետ: Այլ կերպ՝ ժամանակի պահանջի թելադրանք կարող ենք համարել կամ ժամանակաշրջանի ու դրա հետ կապված տպավորությունների թարմության տակ ծնված ոգևորումի արդյունք:

Գեղարվեստական գրականության մեջ ի հայտ եկած նշված «բացը» հետագայում լրացրին վեպերի և այլ գրողներ, որոնց միացավ 60-ական թվականների արձակագիր Հովհ.Մելքոնյանը՝ իր ուրույն ոճով և առելիքի թարմությամբ:

Մարդկության ծագման շրջանից ի վեր պատմությունը արձանագրել է բազմաթիվ ու բազմաբնույթ պատերազմներ: Պատերազմներ են մղվել տարբեր ցեղերի ու ազգերի, տարբեր երկրների ու ժողովուրդների միջև և մինչև օրս մղվում են: Սխալ չէր լինի ասել, բոլոր դեպքերում էլ պատերազմել էր մարդը մարդու դեմ: Պատերազմները մղվել են տարբեր շարժառիթներով ու տարբեր սկզբնապատճառներով, բայց հետևանքների բնույթը նույնն էր, որոնց մասին էլ արձանագրում է Հովհ. Մելքոնյանը իր «Քառասունվեց թվականը» և «Յոթնք արվարձանը» վիպակներում, «Նամակ», «Ձին», «Որդուն սպասող մայրը» և այլ մանրակտավ երկերում:

Պատերազմին նվիրված իր բոլոր գրվածքներում հեղինակի երկի գաղափարական միտվածությունը բանաձևում է այսպես. բոլոր կարգի պատերազմները չարիք են մարդկության համար. «պատերազմը մահ է, մահություն է»:

Ահա թե ինչու հեղինակը նպատակահարմար է գտել նկարագրել ոչ թե պատերազմական գործողությունները իրենց մանրամասնությամբ, այլև շոշափելի դարձնել այն սև հետագիծը, որ թողնում է պատերազմ-աղետը: Այս նպատակամիտվածությամբ էլ խմորվում, կառուցվում է երկի գաղափարական առանցքը: Մեծ Հայրենականը լոկ ծանր հիշողություն չէ, այլ սերունդներին դաստիարակելու հզոր միջոց: Այդ միջոցի կատարելությանն հասնելու համար Մելքոնյանը խնդրին մոտենում է իր հերոսների հոգեկան ապրումների, նրանց զգայական, հուզական ու մտածական բարդ աշխարհների խորը և նուրբ վերլուծության ուղիով:

Թիկունքային կյանքի գեղարվեստական արտացոլումը հաջող և կատարյալ ձև է ստացել «Ցրոնք արվարձանը» վիպակում: Հայրենական պատերազմն ավերիչ հետքեր թողեց ոչ միայն աշխարհի, այլև մարդկային հոգիների և մարդկային հարաբերությունների վրա: Լիազոր Բագրատունին ամեն օր տեղյակ է պահում պատերազմի հասցրած մարդկային կորուստների մասին, սակայն «աշխարհում կային նաև մարդկային ուրիշ կորուստներ, որ լիազոր Բագրատը չի կարող հաշվել»{2}: Մարդիկ հյուծվում են սովից, մարդուց առանձնանում է մարդը, նրանց հոգիներում օրը օրի բուն է դնում անիրավությունը, մարդկային խիղճն արյունոտվում է: Ծախանդուխտը թողնում է կես մարմին դարձած ամուսնուն, մանկան բերանում մորաքրոջ բաժին հացը լեղի է դառնում: Պատերազմը հևում է հացի հերթի կանգնածների շարքում, տխուր ճարճատում վառարանում փայտի տեղ տան մոխրացող գերանների բոցերում, հառաչում մարդկային հոհոցի տակ թալանված հեծանիվը տանող դագաղակիր Մարտինի ետևից: Այս սև ու տխուր օրերին մարդիկ իրենց կուշտ օրերի հիշողություններն են ծամում:

Հեղինակի ներկայացրած ծանր փաստերը ընթերցողին ստիպում են հուզվել, խորհել կյանքի դաժան երևույթների շուրջը: Մտածումների շաղախից տրամաբանորեն ծագում են ինչու՞, ո՞վ է մեղավոր հարցադրումները: Մելքոնյանը մատնացույց է անում մեղսագործներին, այդ նրանք են «ովքեր մարդկային անհաշտությունները, կռվազանությունները, դավադրությունները, թույները, արյան, ավարառության մոլությունները հավաքելով-հավաքելով՝ պողպատի, արյան, կրակի արարողություն են սարքում»{3}:

Դեպքերի զարգացման հետ մեծանում է պատերազմի աղետալի բնույթը ներկայացնելու ձգտումը, գնալով ավելի շոշափելի դառնում հեղինակի միտումը: Ցավը գումարվում է, երբ համամարդկային ողբերգության կողքին հանդես է գալիս ազգային վիշտը: Իր հայրենի տունը կորցրած մշեցի Օհաննեսը նոր կառուցած տան շեմի քարին գրել էր. «Ով տունը քանդե, տունը քանդվի»: Մի ամբողջ ժողովրդի պատմություն է այստեղ արձանագրված: Սովորական խոսքեր չեն, կուտակված քողոքի ու վրեժի անկառավարելի արտահայտություն է, որ խոսում է չսպիացած վերքի հասցրած ցավի մասին:

Հեղինակն այս վիպակում օգտագործել է պատկերավորման հատուկ միջոց: Պատերազմն այստեղ ծավալվում է մանկան պարզ պատկերացումները կոլսկրտելով, մանկական աշխարհի պատուհանից երևացող գունավոր երազները բախվում են անգույն իրողությունների հետ, աշխարհի չարն ու բարին չզատող փոքրիկի համար պատերազմը մարմին է ստանում հոր թալանված հեծանիվի պատկերով:

Հեղինակային խոսքն ազդու է, որովհետև կյանքի ճշմարտություն է ասում: «Բոլոր գերեզմանները սկսվում են մեկ շիրիմից», կյանքի ահազդու ճշմարտություններից է սա: Եվ այսպես շարունակ, վիպակը ճնշվում է ճշմարտության ծանրության տակ: Իր տեսածի ու ապրածի մասին է խոսքը, դեպքերն ու հերոսները իրական են, գործողությունները ծավալվում են իրական դաշտում, հեղինակային եզրահանգումներն ու մտքերը կենսածին են: Այս հիմքերն էլ հնարավորություն են տվել հեղինակին ստեղծել կենդանի, բաբախող վիպակ:

Հովհ. Մելքոնյանի ամեն մի հերոս իր ճակատագրով, իր հայացքներով ու գաղափարներով, իր կենսափիլիսոփայությամբ, մտորումներով ու ապրում-հույզերով հանդիսանում է երկի հիմնական գաղափարի սնուցիչը: Այսպես, մինուճար որդուն ռազմաճակատ ուղարկած Վարսենիկ մայրիկի /«Որդուն սպասող մայրը» պատմվածքում/ սպասումների ու հուսացումերի հիմքում է շաղախվում մեծ արհավիրքի ահավորությունը՝ երկի գաղափարային բովանդակությունը: Պատմվածքի սկզբում ընկած նկարագիրը առաջին տպավորության ազդեցությամբ մեզ հասցնում է Նար-Դոսյան անգույն թաղը՝ լքված տան կանաչապատ տանիք, կորացած, ճարճրած գերաններ:

Պատկերի գորշությունը բացահայտվում և առաջին տպավորությունը ցնդում է, երբ պարզվում է, որ այս պառված տանն ապրում է իր մինուճար որդուն ռազմաճակատ ուղարկած և նրա վերադարձին սպասող Վարենկիկ մայրիկը: Այնուհետև գնալով շիկանում է պատկերի ողբերգականությունը, շնչտվում տխուր մի փաստ. «Որդեկորույս մայրերի համար պատերազմներն սկսվում են և չեն վերջանում»{4}: Պատերազմը ցնցոտել է տունը ոտքի վրա պահող գերանները, մարել տան ճրագը, մի բուռ մոխիր դարձրել որդու դարձին սպասող մորը, սակայն չեն սպառվել հույսը, այդ հույսից տաքացող սպասումը: Որդու վերադարձի օրվան սպասող շիշը կբացի, կպարի հարսանիքին, թոռներ կունենա: Ջորացած մայրը տաքանում է այս հույսով, սակայն երեսունհինգ տարի ջերմության կարոտ որդու անկողինը մրսում է:

Հովի. Մելքոնյանը առաջ քաշելով մարդկային-զգայականը՝ ինչ-որ տեղ աչքաթող է անում պատմության զգացողությունը, դեպքերի ժամանակագրական նկարագրությունը: Սակայն բոլոր դեպքերում էլ գործողությունների հանգուցակետը պատմական իրողությունն է, հիմնական թեման՝ պատերազմի ծանր հետևանքները, գաղափարը՝ պատերազմի՝ որպես համամարդկային աղետի քննադատությունը:

Մելքոնյանի յուրաքանչյուր հերոս իր մեջ կրում է երկի հիմնական գաղափարային միտվածության տարրեր, նրանց հոգեբանական ու խառնվածքային առանձնահատկությունների վերլուծությամբ հեղինակը բացահայտում է երկի հիմնական գաղափարը:

Մի այլ՝ «Ձին» պատմվածքում, թեման նույնն է, բայց տարբեր է երկի գաղափարը: Մելքոնյանի բոլոր հերոսները պարզ ու շիտակ են, անմիջական ու ուղղամիտ, հարուստ բնավորությամբ և, որ ամենակարևորն է՝ անձնուրաց ու հավատարիմ մարդիկ են: Ցրոնք արվարձանի բնակիչ Պատրիկ Դեքենյանի արարքը նշված գծերի կենդանի ապացույցն է: Պատերազմը ավարտվել է, Ցրոնք արվարձանի բնակիչները վերադարձել են, բացի Պատրիկից: Վերջինս ռազմաճակատից իր հետ տուն է բերում իր ճակատային ընկերոջը՝ Գուրգիկին, հաղթանակի ձին: Մահվան մահճում նրա վերջին բաղձանքը Գուրգիկի հետ կողք-կողքի թաղվելն է, որպեսզի «հենց օրը գա, ձայն տաք, ձիուս հետ ելնեմ»{5}:

Այս պատմվածքում ևս հեղինակը հանդես է գալիս նյութն ընկալելու և մատուցելու յուրահատուկ մոտեցումներով՝ նկնելով գաղափարական ինքնատիպ ելակետից, որոնք այսուհայտվում են հերոսների վարքագծի, նրանց հոգեբանության, երևույթների ընդհանրացման միջոցով:

Հովի. Մելքոնյանը Մեծ Հայրենականին նվիրված իր բոլոր երկերում, այս ու այն կողմ ընկնելու բնավորություն չունենալով՝ ուշադրությունից չի շեղում իր նպատակամիտումը, ասելիքը ընդհանրացնելու համար վարպետորեն գտնում է այն բանալին, որով հեշտությամբ ընթերցողի աչքի առաջ բացվում է երկի հանգույց-կոդպերը:

Այսպես, «Նամակ» կտավում կրկին երևակվում է պատերազմ-արհավիրքը, այս անգամ՝ ռազմաճակատից հղված նամակների տեսքով, որոնք պատերազմի դաժանությունների գրավոր վավերաթղթերն են:

Հեղինակն այստեղ ավելի խոր ընդհանրացումներ է կատարում իր հերոսների վարքագծի նկարագրությամբ: Ինչքան խորն է թափանցում հեղինակային միտքը, այնքան պարզորոշ է երևում աղետի ցավոտ կողմերը: Պարզվում է, որ պատերազմը սպանում է ոչ միայն մարդուն ու մարդկայինը, այլև խաթարում է բնության ներդաշնակությունը. «...Ցունը խաղաղություն է, երկնքից իջած հաշտության դրոշ, պատերազմի դաշտերից մեծ, աշխարհի չափ մեծ... արյունոտվեց վիրակապի պես, սևացավ, մոխրոտվեց, կրակից հանված շորի նման, քրքրվեց՝ դարձավ քուրջ, գարշելի այլանդակվեց, և մյուս օրը արդեն ձյունից արյան ու լեղի հոտ էր գալիս{6}»:

Հովի.Մելքոնյանի կտավի այս կտորը հիշեցնում է Լև Տոլստոյի հերոսներից մեկի՝ իշխան Անդրեյի խորհրդածությունները երկնքի անսահման մեծության և պատերազմի մասին:

Այսպես. Հովի.Մելքոնյանի հիշյալ երկերն առանձնանում են նույն թեմայով գրված մի շարք գրվածքներից: Գաղտնիքը նյութի մատուցման եղանակի, ինչպես և պատերազմի՝ համամարդկային այդ աղետի հանդեպ հեղինակային վերաբերմունքի ինքնատիպ արտահայտության մեջ է: Մելքոնյանի բոլոր երկերում Հայրենական պատերազմը անդրադարձվում է հերոսների հոգեբանության ընդհանրացման միջոցով: Երկի գործողությունների

ընթացքի հետ լինելով՝ հեղինակը մինչև վերջ հետևողականորեն իր հետ տանում է հեղինակայի դավանանքը՝ երկի հիմնական գաղափարը՝ մերկացնելով պատերազմի ահավոր էությունը:

Ամփոփում

1945թ. մայիսի 9-ի Մեծ հաղթանակից հետո Հայրենական պատերազմի թեման գեղարվեստական պատկերման նոր հունի մեջ մտավ: Այս առումով լուրջ նվաճումների հասան Քր.Թոփալգյանը, Հմ.Միրասը, Հր.Քոչարը, Ս.Խանզադյանը, Բ.Հովսեփյանը, Գ.Սևունցը, Մ.Սարգսյանը և ուրիշներ:

Իր ավագ գրչեղբայրների հետ Հ. Մելքոնյանը ևս ստեղծեց փայլուն կտավի երկեր, որոնց թեկուզ թեմատիկ առումով նորություններ չեն, սակայն խնդրի մեկնաբանման ուրույն մոտեցման և պատկերման հնարանքներով միանգամայն թարմ, նոր երևույթներ հանդիսացան:

Հովհ. Մելքոնյանը նկարագրում է ոչ թե պատերազմական գործողությունները, այլև շոշափելի է դարձնում պատերազմի հետագիծը՝ ներկայացնելով իր հերոսների հոգեկան ապրումները, նրանց հուզական և մտածական աշխարհը: Գրողը հիմնականում ներկայացնում է թիկունքային կյանքը և հասնում լուրջ նվաճումների: Նրա «Ցրոնք արվարձան» վիպակը, «Որդուն սպասող մայրը», «Ձին» և «Նամակ» պատմվածքները մնայուն արժեքներ են Մեծ Հայրենականի արհավիրքները պատկերող ստեղծագործությունների շարքում: Հեղինակը նկարագրելով պատերազմը, պայքարում է պատերազմի դեմ, որի անհրաժեշտությունը զգացվում է այսօրվա և վաղվա ընթացքի մեջ:

Резюме

ВЕЛИКАЯ ОТЕЧЕСТВЕННАЯ ВОЙНА В ПРОИЗВЕДЕНИЯХ ОВАНЕСА МЕЛКОНЯНА

М. Т.Айрапетян

После великой победы 9 мая 1945 года тема Великой Отечественной войны нашла новое отражение в художественной литературе. В этой отрасли заметных достижений достигли К. Топалцян, А.Сирас, Р. Кочар, С.Ханзадян, Б.Овсепян, Г. Севунц, М.Саркисян и другие.

Вместе со своими старшими соратниками, О. Мелконян тоже создал замечательное произведение, которое несмотря на то, что не являлось новизной по тематике, но оценивалось как новое, свежее явление, отражение, своими подходами и художественными особенностями.

О.Мелконян описывал не военные действия, а обратил внимание на последствия войны, представляя душевные переживания, волнующий и интеллектуальный мир своих героев. В основном писатель отражал жизнь тыла и достиг больших успехов. Его повесть "Поселок Цронк" и рассказы "Мать, ждущая сына", "Лошадь", "Письмо" надолго останутся в рядах тех произведений, где отражаются тяжелые испытания во время и после Великой Отечественной войны.

В этих произведениях автор ,описывая войну, борется против войны, необходимость которой чуствуется и в сегодняшней и в завтрашней жизни.

Գրականություն

[1] Ս. Արզումանյան, Սովետահայ վեպը, գիրք 2, Սովետական գրող հրատ., Եր.,1980, էջ 13:
[2] Հովհ.Մելքոնյան, Քարավան, Հայաստան հրատ., Եր., 1971, էջ 42:
[3] Նույնը, էջ 53:
[4] Տես Հովհ. Մելքոնյան, Մոր ձայնը, Սովետական գրող հրատ., Եր., 1980, էջ 212:
[5] Նույնը , էջ 203:
[6] Նույնը, էջ 183: